

**Սարգիս Մ. Մկրտչեան**

**ՊԱՆԹԻՐՔԻԶՄ ԵՒ ՊԱՆԱԶԵՐԻԶՄ**

Համեմատական քննութիւն\*

**Քանալի բառեր** - պանազերիզմ, Ադրբեջան, պանթիրքիզմ, Իրան, Մեծ Թուրան, թիրքերէն, ազերի, լեզու, ինքնագիտակցութիւն, ինքնութիւն:

**Ուսումնասիրութեան նպատակն է բացայայտել, թէ ինչ է պանազերիզմը, ինչ կապ ունի այն պանթիրքիզմի հետ, եւ որոնք են պանթիրքիզմի եւ պանազերիզմի տարբերութիւններն ու ընդհանրութիւնները:**

Հիմնուելով տարբեր տպագիր եւ թուային գրքերի, ինչպէս նաեւ կայքէջերի հրատարակած տեղեկութիւնների վրայ՝ կարելի է կատարել հետեւեալ նախնական հաստատումները.

- պանթիրքիզմը գաղափարական, քաղաքական եւ մշակութային շարժում է, որի նպատակը աշխարհի թիրքալեզու ժողովուրդների համախմբումն է մէկ միասնական պետութեան մէջ,

- պանազերիզմը նոյնպէս գաղափարական, քաղաքական եւ մշակութային շարժում է, որի նպատակը Ադրբեջանի Հանրապետութեան եւ Իրանի ազերիաբնակ<sup>1</sup> շրջանների միաւորումն է,

- պանթիրքիզմի արմատները հասնում են 19-րդ դարի վերջերը, մինչդեռ պանազերիզմի մասին կարելի է խօսել սոսկ արհեստական պետութեան՝ Ադրբեջանի Հանրապետութեան 1918 թ. հիմնադրման համատեքստում:

Այսինքն՝ նախնական համեմատութիւնն ի ցոյց է դնում երկու հասկացութիւնների կապն ու հոգեհարազատութիւնը մէկ էական տարբերութեամբ, այն է՝ պանազերիզմը, տեղայնացնելով պանթիրքիզմի նպատակները որոշակի տարածաշրջանում՝ պանթիրքականների քաղաքական վերահսկողութիւնից դուրս գտնուող Իրանի ազերիաբնակ շրջաններում, անթա-

\* Յօդուածն ընդունուել է տպագրութեան 20.03.2020:

1 Ազերին Իրանի հիւսիսարեւմտեան շրջանների բնակչութեան հնագոյն լեզուն է: Հետագայ դարերում տարբեր պատճառներով այդ շրջաններում գերիշխող է դարձել թիրքերէնը:

քոյց յաւակնութիւն է դրսեւորում դրանց հանդէպ: **Քայց նման պարզ համեմատութիւնը բացայայտո՞ւմ է արդեօք հարցի խորքը եւ նրա բոլոր նրբերանգները:** Ստորեւ կատարուող քննութիւնը ցոյց է տալիս, որ խնդիրն աւելի բարդ է ու բազմաշերտ:

«Իսլամ աշխարհի հանրագիտարան»-ում «պանթիքիզմ» եզրի դիմաց գրուած է. «Պանթիքիզմ: Ազգայնական գաղափարախօսութիւն եւ քաղաքական-մշակութային շարժում 19-րդ դարի վերջերում: Այս քաղաքական գաղափարը պահանջում էր բոլոր այն թիւրքերի մշակութային, լեզուական եւ քաղաքական միասնութիւնը, որոնք ճանաչելի են միասնական լեզուաընտանիքի, նախնիների, պատմութեան եւ աւանդութիւնների հիման վրայ: Ըստ այս գաղափարի՝ մուսուլման թիւրքալեզուները, յատկապէս՝ նրանք, ովքեր ապրում են Թուրքիայում, Կիպրոսում, Բալկանեան թերակղզում, նախկին Խորհրդային Միութիւնում, Իրաքում, Իրանում, Աֆղանստանում եւ Արեւելեան Թուրքեստանում (Սինցզեան), մի մեծ ազգի մասնիկներն են, եւ նրանք բոլորը պիտի Թուրքիայի ղեկավարութեամբ մի միասնական պետութեան մէջ համախմբուեն»<sup>2</sup>:

«Պանագերիզմ» կամ «պանագերի» բառերը վերոյիշեալ հանրագիտարանում եւ բազմաթիւ այլ գիտական բառարաններում ու հանրագիտարաններում գոյութիւն չունեն, եւ դրանց մասին գրականութիւնը չափազանց աղքատ է: Թեմայի վերաբերեալ հրատարակուած եզակի գրքերից մէկը իրանցի հետազոտող Ահմադ Քազեմիի «Պանթիքիզմ եւ պանագերիզմ»<sup>3</sup> աշխատութիւնն է, որտեղ նա, մանրամասն քննելով հարցը, ներկայացրել է նաեւ այն կազմակերպութիւններին, որոնք աշխատում են այդ գաղափարը կեանքի կոչելու ուղղութեամբ<sup>4</sup>:

Իրականութիւնն այն է, որ ոմանք պանագերիզմը տարբերում են պանթիքիզմից, ոմանք էլ պանագերիզմը համարում են պանթիքիզմից սերած: Ժամանակագրական առումով պանթիքիզմն աւելի շուտ է առաջացել, քան պանագերիզմը: Եւ քանի որ պանագերիզմի նպատակը Արաքս գետի երկու կողմերում գտնուող հիւսիսային եւ հարաւային թիւրքախօս շրջանների միաւորումն է, իսկ պանթիքիզմի նպատակը՝ պանթիքական կայսրութեան ստեղծումը, թւում է, թէ պանագերիզմի ակունքներում միայն պանթիքիզմի դրոյթներն են: Այսինքն՝ երկու գաղափարախօսութիւնները միեւնոյն ակուն-

2 رحيم رئيس نيا، دانشنامه جهان اسلام، چاپ دوم، مدخل لغت نامه و دانشنامه بزرگ، جلد ۵، سال ۱۳۷۹، صفحات ۴۷۲-۴۶۶

(**Ռահիմ Ռէյիսնիա**, Իսլամ աշխարհի հանրագիտարան, 5-րդ հատոր, Բառարան և Մեծ հանրագիտարան զվտի տակ, 1379 թ. (2000 թ.), էջ 466-472): Յաւելեալ տեղեկութիւնների համար տե՛ս <http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644> (մուտք՝ 10.11.2016):

3 احمد كاظمي، بان تركيسم، انتشارات مؤسسة فرهنگي مطالعات و تحقيقات بين المللي ايرار معاصر تهران، سال ۱۳۸۵، چاپ نخست، صفحه ۲۷۲

(**Ահմադ Քազեմի**, Պանթիքիզմ և պանագերիզմ, Թեհրանի ժամանակակից «Արար» միջազգային հետազոտական և ուսումնասիրական մշակութային կենտրոն, Թեհրան, 1385 (2006 )):

4 Տե՛ս նոյն տեղում, էջ 91-133:

քից են սերում եւ ունեն հիմնական ընդհանրություններ, իսկ դրանց տարանջատումն ունի երեւոյթի առաւել յստակ ճանաչողութեան նպատակ:

Սակայն հարցի ամբողջական քննութեան համար կարելոք է ընդգծել, որ էթնիկական ծագման եւ ինքնութեան առումով Իրանի **ազերին եւ թուրք տարբեր ժողովուրդներ են**: Մինչդեռ պանթիւրքականներն ամէն կերպ փորձում են ցոյց տալ, որ այդ երկուսը նոյնն են: Ուստի պանազերիականները խօսում են Մեծ Ադրբեջանի մասին, իսկ պանթիւրքականները՝ Թուրանի կամ Մեծ Թուրքեստանի: Եւ երկուսն էլ խօսում են Հարաւային եւ Հիւսիսային Ադրբեջանների միաւորման մասին, ուստի տեսականօրէն պանազերիականների շահերը պետք է որ հակադրուեն նոյն տարածքներին յաւակնող պանթիւրքականների շահերին: Սակայն խնդիրն այն է, որ պանթիւրքիզմի սահմանման մէջ միայն այդ տարածքները չեն աշխարհագրօրէն միաւորուած: Մինչդեռ երկու Ադրբեջանների գաղափարի հիմքն այն իրողութիւնն է, որ 1918 թուականին հիմնադրուել է ներկայիս Ադրբեջանի Հանրապետութիւնը՝ այն տարածքում որտեղ մինչ այդ Ադրբեջան (Ատրպատական) տարածք ու երկիր գոյութիւն չեն ունեցել: Արհեստածին Ադրբեջան պետութեան հիմնումը Առանի ու Շիրուանի տարածքներում՝ թուրքական սուլիանների միջոցով, հետապնդել է գուտ ծաւալապաշտական նպատակներ: Ուրեմն ի՞նչ հիմքի վրայ նման նորագոյացութեանը պետք է միաւորուեն Իրանի Ատրպատականի թիւրքախօս շրջանները, եւ գոյութիւն ունեն արդեօք դրա համար անհրաժեշտ պատմական ու իրաւական հիմքեր:

Փորձենք մանրամասնել հարցը: Իրանի թիւրքախօս շրջաններ ասելով պայմանականօրէն նկատի ունենք Իրանի Ատրպատականը, որովհետեւ, Իրանի այսօրուայ վարչատարածքային բաժանմամբ, թիւրքախօս նահանգներն են Արեւելեան Ատրպատականը, Արեւմտեան Ատրպատականը, Արդեբիլը եւ Չանջանը: Անշուշտ, թիւրքախօսներ կան նաեւ երկրի այլ շրջաններում, օրինակ՝ Խորասանում, սակայն նախ՝ նրանք նահանգի բնակչութեան մեծամասնութիւնը չեն կազմում, եւ երկրորդ՝ մեր նիւթի քննութեան առարկայ տարածաշրջանի հետ կապ չունեն<sup>5</sup>:

Այս չորս նահանգների բնակչութեան ընդհանուր թիւր ըստ Իրանի վիճակագրական կենտրոնի 2016 թ. վիճակագրութեան տուեալների կազմում է՝ 9 մլն. 502 752<sup>6</sup>: Որոշ վերլուծական կենտրոնների հաշուարկներով՝ թիւրքախօսների ընդհանուր թիւր Իրանում հասնում է մօտ 18 միլիոնի: Ըստ նման հաշուարկի՝ եթէ ընդունենք, որ Ղազուին եւ Համադան նահանգների բնակչութեան կէսը եւ Թեհրանի բնակչութեան մէկ երրորդը թիւրքախօսներ են,

5 Տե՛ս <https://bit.ly/2vJyAs4> (մուտք՝ 14.02.2020):

6 Տե՛ս [https://www.amar.org.ir/Portals/0/1\\_result\\_951221.pdf](https://www.amar.org.ir/Portals/0/1_result_951221.pdf) (մուտք՝ 14.02.2020):

ապա կհասնենք այդ թուին<sup>7</sup>: Ազերիաբնակ այս չորս նահանգների ընդհանուր մակերեսը կազմում է 120 հազ. 026 քառ. կմ:

Իսկ Ադրբեջանի Հանրապետության բնակչության թիվը 2019 թ. պաշտոնական տուեալներով շուրջ 10 միլիոն է, տարածությունը՝ 86 հազ. 600 քառ. կմ, ինչը խիստ ուռճացուած է, քանի որ արհեստականորէն նրա մէջ են ներառուած նաեւ Արցախի Հանրապետութեան բոլոր տարածքները<sup>8</sup>:

Ուրեմն, ըստ պանագերիականների, խօսքը մօտ 28 միլիոն բնակչութիւն եւ 206 հազ. 626 քառ. կմ մակերես ունեցող տարածքի մասին է, որի բնակչութեան երկու երրորդը բնակուում է Իրանում, քանի որ Ադրբեջանի Հանրապետութեան ներկայացրած պաշտօնական թիւն ակնհայտօրէն կեղծուած է: Ստացուում է, որ մեծամասնութեանն առաջարկուում է ենթարկուել փոքրամասնութեան կամքին:

Աւելին՝ անտեսուում են նաեւ ազերի ընդհանրութեան էթնիկ ծագումն ու իրական արմատները: Հանրայայտ իրանցի պատմագիր, լեզուաբան եւ իրաւաբան Ահմադ Քասրաւին իր «Ազերի կամ Ադրբեջանի հնագոյն լեզու» գրքում, որն առաջին անգամ հրատարակուել է 1925 թ., ներկայացրել է Իրանի Ատրպատականի հնագոյն լեզուի մասին իր ուսումնասիրութիւնը, որը ցայսօր համարուում է սկզբնաղբիւր հետազոտողների ու գիտնականների համար: Ըստ Քասրաւիի ուսումնասիրութեան՝ Ատրպատականի լեզուն մի քանի հարիւր տարի առաջ եղել է ազերին (**Azeri**), որն իրանական լեզուախմբի մաս է կազմում<sup>9</sup>: Քասրաւիի տեսութիւնն ընդունուել է բազմաթիւ իրանագէտների եւ արեւելագէտների կողմից, ինչպիսիք են գերմանացի Վալտեր Բրունօ Հեննինգը եւ ռուս Վլադիմիր Մինորսկին:

Վալտեր Բրունօ Հեննինգը, օրինակ, «Տասը խօսք Խորեզմի<sup>10</sup> լեզուի մասին» աշխատութիւնում ներառուած իր յօդուածում գրում է. «Մի քանի դար է, որ թիւրքական լեզուի մի մասնաճիւղը Իրանի հիւսիսարեւմտեան նահանգներում, Ատրպատականում եւ Չանջանում ժողովրդական լեզու է դարձել: Իրանցի պատմաբան Մեյլէ Ահմադ Քասրաւին պատմական փաստաթղթերի եւ աղբիւրների հիման վրայ ուսումնասիրել է թիւրքացեղ տոհմների ազդեցութեան աստիճանական տարածման ձեւը եւ դրա հետեւանքով այդ տարածաշրջանի նախկին բնակիչների իրանական լեզուի նահանջն ու վերջնական անհետացումը: Այդ գործընթացը սկսուել է 11-րդ դարում եւ աւարտուել 16-րդ դարասկզբում: Բոլորը համակարծիք են, եւ իրականում որ-

7 St' u <https://bit.ly/2QGBwwY> (մուտք 14.02.2020):

8 Ադրբեջանի Հանրապետութեան բնակչութեան թիւը (10 միլիոն) խիստ ուռճացուած է, քանի որ այդ երկրում պարբերաբար տեղի ունեցող ընտրութիւններում **առկայ բնակչութեան** հետ համեմատութիւնը նուազագոյնը մօտ մէկ երրորդի շեղում է տալիս:

9 St' u غلامرضا انصاف پور، تاريخ تبار و زبان مردم آذربايجان، انتشارات فكر روز، تهران، چاپ اول، ۱۳۷۷، ۲۰۱ صفحه

Այս մասին տե՛ս նաև **Ղուանդեա Էնսաֆիում**, Ատրպատականի ժողովրդի ծագման եւ լեզուի պատմութիւնը, Թեհրան, «Ֆեթը է ռուզ» հրատարակչութիւն, 1998:

10 Գրուում է նաև **Խուարեզմ**:



պէս Աղրբեջանի հիւսիսը մեծ մասամբ թուրք ցեղից է, եւ այնպէս, ինչպէս Աղրբեջանի հիւսիսը Իրանի հետ որեւէ լեզուական ու ցեղային կապ չունի, հէնց այդպէս էլ հարաւը Իրանի հետ, որի ենթակայութեան ու հպատակութեան ներքոյ է, այդ տեսակէտից ուղղակի կապ ու առնչութիւն չի ունեցել ու չունի»<sup>15</sup>: Նշենք, որ «Ճաֆաղ է Սորիս» թերթն իրանական այն թերթերից էր, որոնք հակադարձում էին պանթիքթական գրութիւններին:

Քաւեհ Բայաթն այն կարծիքին է, որ այս յօդուածը թերեւս կարելի է համարել «Հիւսիսային եւ Հարաւային՝ երկու Աղրբեջաններ» հասկացութեան «պաշտօնական յայտնագործմանն սկիզբը պանթիքթականների կողմից»<sup>16</sup>:

Անշուշտ, Բայաթը կարծում է, որ 20-րդ դարի 20-ական թուականներին պանթիքթիկներէն ղեռնարկ դիտուում էր որպէս նոր Թուրքիայում մի լուսանցքային եւ ոչ տիրական շարժում, որի կապակցութեամբ Իրանում երկու իրարամերժ մօտեցում կար: Մէկը պատմական մօտեցումն էր, որը պանթիքթիկ մի արմատները փնտրում էր «Իրանի ու Թուրանի»<sup>17</sup> միջեւ հին պայքարի ադաւադուած ընկալումներում, իսկ միւսը պանթիքթիկ դիտում էր որպէս աւելի ուշ շրջանի եւ Օսմանեան կայսրութեան փլուզմանն առնչուող երեւոյթ»<sup>18</sup>:

Թուրաջ Աթաբակին, իր «Աղրբեջանը ժամանակակից Իրանում»<sup>19</sup> գրքում վերլուծելով Խորհրդային Միութեան դերակատարութիւնը Ատրպատականի պատմութեան՝ պանթիքթական մեկնակէտով վերաշարադրման հարցում, նշում է, որ «Այդ նպատակով շատ մեծ աշխատանք տարուեց, որպէսզի պատմութիւնը վերաշարադրուի»<sup>20</sup>, ինչի վառ «...օրինակներից մէկը Խորհրդային Աղրբեջանի (ներկայիս Աղրբեջանի Հանրապետութեան), որն Իրանի Ատրպատականի հիւսիսում է գտնուում, պատմութեան հիմնական վերաշարադրումն էր»<sup>21</sup>, ըստ որի՝ «...Աղրբեջանի շրջանը հնագոյն ժամանակներից թուրքական որոշակի ցեղախմբերի հայրենիքն է եղել»<sup>22</sup>: Աւելին, նրա կարծիքով, «Հիւսիսային եւ Հարաւային Աղրբեջանի նման դարձուածքների օգտագործումը Իրանի Ատրպատականի եւ նախկին Խորհրդային Աղրբեջանի մտաւորականների որոշ շրջանակներում՝ Արաքս գետի հիւսիսային ու հարաւային շրջաններն առանձնացնելու առումով, մէկ այլ օրինակ է այն փորձից, թե ինչպէս էին օգտա-

15 Մեջբերումը ըստ՝ **Քաւեհ Բայաթ**, նոյն տեղում, էջ 75:

16 Նոյն տեղում, էջ 76:

17 Յայտնի է, որ նախքան թիքթական քոչուոր ցեղերի ներխուժումը Թուրանը (Միջին Ասիան) նոյնպէս եղել է իրանական տարածք:

18 Տե՛ս **Քաւեհ Բայաթ**, նշվ. աշխ., էջ 80:

19 Տե՛ս **«تورج اتابکی، آذربایجان در ایران معاصر، ترجمه محمد کریم اشراق، انتشارات توس، چاپ اول، ۱۳۷۶، تهران، ۲۸۷صفحه»**

(**Թուրաջ Աթաբակի**, Աղրբեջանը ժամանակակից Իրանում, Թեհրան, Ա հրատարակչութիւն, «Թուս» հրատարակչութիւն, 1998 ( 1376 թ.):

20 Նոյն տեղում, էջ 10 - 11:

21 Նոյն տեղում

22 Նոյն տեղում:

գործում աշխարհագրական պարզ դարձումները՝ պատմական օրինակա-  
նություն ստեղծելու նպատակով»<sup>23</sup>:

Ստացում է, որ Ադրբեջանի Հանրապետության ստեղծումից յետոյ պան-  
թիւրքականների ծրագրերին ինքնութեանական իմաստ հաղորդելու գործընթա-  
ցում էական դեր են խաղացել նաեւ ԽՍՀՄ-ի ծաւալապաշտական նպատակ-  
ները: Այդ առումով Բաբելի եւ այլ իրանցի հերոսների գովքի միջոցով խոր-  
հրդային Բաքուից տարածուող պանագրիզմը ԽՍՀՄ-ին աւելի ձեռնտու էր,  
քան դէպի Թուրքիա միտուած բացայայտ պանթիւրքիզմը: Իսկ ներկայումս  
բացայայտ կերպով պանթիւրքական նպատակներ հետապնդող կազմակեր-  
պությունները եւ գործիչներն առաջնորդում են Ադրբեջանի Հանրապետու-  
թեան եւ Իրանի թիւրքախօս շրջանների միացման նպատակով: Նրանք երբէք  
«պանագրիէ բառը չեն գործածում, որովհետեւ իրենք իրենց թուրք են համա-  
րում:

Մինչդեռ՝ իրականությունն այն է, որ պանթիւրքիզմի դէմ պայքարի առաջին  
ճակատում թէ՛ 20-րդ դարում եւ թէ՛ այսօր հէնց Ատրպատականի մտաւորա-  
կանությունն է, որն իրեն համարում է ազերի: Որովհետեւ թիւրքերէնն Ատրպա-  
տականում տարածուել է հետագայ դարերում, իսկ միայն լեզուն ազգութեան  
բացարձակ չափանիշ չէ:

Ազգային եւ ցեղային ինքնութեան եւ ազերի մտաւորականութեան կապի  
մասին օգտակար աշխատություններից է Ալի Մորշեղիզադի «Ազերի մտաւո-  
րականությունը եւ ազգային ու էթնիկական ինքնությունը»<sup>24</sup> գիրքը, որում հեղի-  
նակը հանգամանալից ներկայացնում է ազերի մտաւորականներին եւ նրանց  
խմբաւորում ըստ մարքսիստների, մոդեռնիստների եւ իրանականների: Այդ  
խմբաւորումներից իւրաքանչիւրում կային ազգային եւ տարածաշրջանային  
հակումներ ունեցող խմբեր: Նա յայտնում է, որ սկզբում, յատկապէս՝ Փահլեւի  
հարստութեան սկզբնական շրջանում, գերակայություն են ունեցել ազգային  
մտածողություն ունեցողները, որոնց մի մասը, հետագայ շրջաններում ընկերա-  
յին, քաղաքական, տնտեսական, բայց մանաւանդ՝ արտաքին պատճառներից  
էլնելով, հեռացել է այդ մտածողությունից: Աշխատությունում ներկայացուած  
են ազերի բազմաթիւ անուններ, որոնք կա՛մ իրենց գրչով, կա՛մ որպէս քաղա-  
քական, պետական եւ ռազմական գործիչներ մեծ դեր են ունեցել Իրանի վեր-  
ջին հարիւրամեայ պատմութեան կերտման մէջ<sup>25</sup>: Այսինքն՝ ազերիները՝ որպէս  
իրանցիներ, կարելոր դեր են խաղացել իրանական ինքնութեան ամրապնդման  
եւ պանթիւրքիզմի դէմ պայքարում:

23 Նոյն տեղում:

24 St' u علی مرشدی زاد، روشنفکران آذری و هویت ملی و قومی، نشر مرکز، تهران، سال ۱۳۸۰، چاپ ۳۶۵ صفحه اول، ۳۶۵

(Ալի Մորշեղիզադ, Ազերի մտաւորականները եւ ազգային ու էթնիկական ինքնութիւնը, Թեհրան, «Մարքազ»  
իրատարակչութիւն, 1380 արեգակնային տարի (2001 թ.), առաջին հրատարակութիւն):

25 St' u նոյն տեղում, էջ 358-365:

Իսկ մէկ այլ հեղինակի՝ Ռահիմ Նիքբախտի աշխատասիրութեամբ հրատարակուած «Ատրպատականի դերը Իրանի ինքնութեան ամրապնդման գործում»<sup>26</sup> աշխատութեան մէջ օրինակ բերելով կրօնի ազդակը՝ նշուում է, որ զրադաշտականութիւնից մինչեւ Սաֆաւիների միջոցով ազգային պետութեան ձեւաւորումը եւ նրանց ժամանակ շիզմի պաշտօնականացումը Իրանում բոլոր այդ ուսմունքներն ու շարժումներն ակունք են առել Ատրպատականից: Իսկ 20-րդ դարում Ատրպատականը մեծազոյն դեր է ունեցել Իրանի Սահմանադրական շարժման մէջ, Ռեզա շահի միապետութեան դէմ ուղղուած պայքարում, նաւթի ազգայնացման համար մղուող պայքարում, Իրանի Իսլամական յեղափոխութեան յաղթանակի գործում եւ Իրան-Իրաք 8-ամեայ պատերազմում:

Մինչդեռ պանթիքիզմի առաջին ճակատում գտնուող Ադրբեջանի Հանրապետութիւնը պանազերիզմի քողի ներքոյ իրական սպառնալիք է ստեղծում Իրանի համար: 1992 թ. Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյը բացայայտ խօսում էր Հարաւային ու Հիւսիսային Ադրբեջանների միաւորման մասին: Իսկ ներկայումս քիչ չեն այն կազմակերպութիւնները, որոնք խօսում են Հարաւային Ադրբեջանի անկախութեան մասին:

Օրինակ՝ «Ադրբեջանի ազգային դիմադրութիւն» կազմակերպութիւնն իր հիմնադրման 13-ամեակի առիթով 2019 թ. մարտի 19-ին հրապարակել է տեսաուղերձ, որում ասուում է. «...Կազմակերպութեան հիմնադիր խորհուրդը կազմակերպութիւնը հիմնադրել է մեր հայրենիքը պանիրանիզմի եւ ցեղապաշտութեան ճիրաններից ազատագրելու համար: Ադրբեջանի թուրք երիտասարդները, ներշնչուելով Հիւսիսային Ադրբեջանի անկախութիւնից, քաջութեամբ իրենց ազգային կարգախօսներն են վանկարկում... Հարաւային Ադրբեջանի տարածքում ազգային պետութիւն ստեղծելը Ադրբեջանի թուրք ազգի բնական իրաւունքն է»<sup>27</sup>:

Մէկ այլ կազմակերպութեան՝ «Հարաւային Ադրբեջանի անկախութիւն» կուսակցութեան կանոնագրի նախաբանում կարդում ենք. «...«Հարաւային Ադրբեջանի անկախութիւնն կուսակցութիւնը պայքարում է ամբողջական անկախութեան եւ Հարաւային Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետութեան հաստատման համար»<sup>28</sup>: Իսկ սահմանում բաժնում. «ՀԱԱԿ-ը, նկատի ունենալով երկու քաղաքական պայմաններում մէկ ազգի իրականու-

26 St' u رحيم نيكيخت، نقش آذربایجان در تحکیم هویت ایران، سال ۱۳۸۷، 'چاپ اول، تهران، وزارت علوم، تحقیقات و فناوری، معاونت فرهنگی، دفتر برنامه ریزی اجتماعی و مطالعات فرهنگی و دانشگاه پیام نور، مرکز نوده، ۵۷۶ صفحه

(**Ռահիմ Նիքբախտ**, Ատրպատականի դերը Իրանի ինքնութեան ամրապնդման գործում, աշխատասիրութիւն, 1387 արեգակնային տարի (2008 թ.), առաջին հրատարակութիւն, Պիտութեան, հետազոտութիւնների եւ ճարտարարուեստի նախարարութեան մշակութային ուսումնասիրութիւնների եւ ընկերային ծրագրաւորումների գրասենեակի եւ Փայամ է Նուր համալսարանի Նաղադէյի կենտրոնի հրատարակչութիւն):

27 <http://www.araznews.org/fa/?p=50418> (մուտք 12.03.2020).

28 <http://gaip.biz/index.php/81-x-b-rl-r/83-2013-05-26-15-26-01> (մուտք 17.03.2017).

թիւնը, Հիւսիսային Ադրբեջանի Հանրապետութեանը համարում է իր մշտական դաշնակիցը եւ պաշտպանում է նրա պետութիւնը»<sup>29</sup>:

Վերոյիշեալ, ինչպէս նաեւ նմանատիպ այլ կազմակերպութիւնների գաղափարախօսութիւնը, ծրագրերը եւ նպատակներն իրականում հիմնուած են պանթիւրքիզմի հիմնադիր Չիյա Գեօքալիի հայեացքների վրայ: Հետեւաբար որքան էլ փորձ արուի բացայայտ կամ քողարկուած կերպով խօսել Ատրպատականի կամ իրենց բնորոշմամբ՝ Հարաւային Ադրբեջանի ժողովրդի ոտնահարուած իրաւունքների եւ Հարաւային ու Հիւսիսային Ադրբեջանների միացման մասին, ակնյայտ է, որ նման մօտեցումը պանազերիզմը դիտարկում է որպէս պանթիւրքական շարժման գաղափարախօսական հիմնաւորում:

Զմոռանանք, որ Աշխարհի ադրբեջանցիների համերաշխութեան օրուայ սահմանումը, որը նշուում է ամէն տարուայ դեկտեմբերի 31-ին, Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան նախագահ Հէյար Ալիեւի նախաձեռնութիւնն էր, որի առաջարկութեամբ օրինագիծը հաստատուեց 1990 թ., եւ այդ օրն առաջին անգամ նշուեց 1991 թ.: Ալիեւը ներշնչուել էր Բեռլինի պատի կազմաքանդումից: Բեռլինի պատն առանձնացնում էր Բեռլինի արեւելեան եւ արեւմտեան հատուածները՝ Գերմանիայի մայրաքաղաքը բաժանելով արեւմտեան եւ արեւելեան մասերի: Դժուար չէ կռահել Հէյար Ալիեւի յետին նպատակը, որն այսօր պանազերիզմով քողարկուած պանթիւրքիզմի է վերածուել նրա հետնորդների կողմից:

**Հետեւաբար պանազերիզմի իրական բովանդակութիւնը կախուած է նրանից, թէ ո՞ր տեսանկիւնից ենք մօտենում այդ հասկացութեանը, եւ ըստ այդմ՝ ում նպատակին է նա ծառայում:**

Բերենք մի քանի օրինակ:

2012 թ. փետրուարի 9-ին Ադրբեջանի Հանրապետութեան իշխող կուսակցութիւնից մի քանի պատգամաւորներ առաջարկել են, որ իրենց երկրի անունը փոխուի, եւ այն այդուհետ կոչուի Հիւսիսային Ադրբեջան<sup>30</sup>: Այս կապակցութեամբ ադրբեջանական «Թրենդ» լրատուական գործակալութիւնը հաղորդել է, որ «Ենի Ազարբայջան» իշխող կուսակցութեան պատգամաւոր Սիաւուշ Նովրուզովն ասել է, որ ինչպէս Հիւսիսային եւ Հարաւային Կորէաները, «այնպէս էլ Ադրբեջանը, նկատի ունենալով, որ մասնատուած պետութիւն է, լաւ կը լինէր, որ անուանակոչուի Հիւսիսային Ադրբեջան»<sup>31</sup>:

Միւս կողմից, Իրանի իսլամական խորհրդարանի (Մեշլիս) Անվտանգութեան յանձնաժողովի նախկին փոխնախագահ Մանսուր Հադիդալօփուռը 2013 թ. ապրիլի 3-ին յայտարարում էր, որ «Ադրբեջանի Հանրապետութիւնում Իրանին միանալու շարժում է սկսուել եւ ժողովրդի կամքն ու ցանկու-

29 Նոյն տեղում:

30 Տե՛ս [http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209\\_123\\_iran\\_azarbayjan\\_change\\_name.shtml](http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209_123_iran_azarbayjan_change_name.shtml) (մուտք՝ 18.09.2017):

31 Նոյն տեղում:

թիւնը կարող է նման պահանջն իրականութիւն դարձնել... Արդեքիլի, Թաւրի-  
զի, Ուրմիայի եւ Չանջանի երիտասարդները պատրաստ են ազերի պետա-  
կան այրերի նենգ գործողութիւններին կտրուկ պատասխան տալու եւ իրենց  
պատրաստակամութիւնը յայտնելու դաջարական շրջանում Իրանից կողոպ-  
տուած քաղաքները յետ վերցնելու վերաբերեալ»<sup>32</sup>:

Իսկ Իրանում հրատարակուող ամենայայտնի արմատական օրաթերթե-  
րից մէկի՝ «Քէյհանի» խմբագիր Հոսէյն Շարիաթմադարին, ով միաժամանակ  
Իրանի առաջնորդի ներկայացուցիչն է «Քէյհան» հաստատութիւնում, նոյն  
օրը՝ 2013 թ. ապրիլի 3-ին, նոյն «Քէյհանում» հրատարակած իր յօդուածում  
առաջարկում էր, որ Ադրբեջանի Հանրապետութիւնում Իրանին միանալու  
հանրաքուէ անցկացուի, եւ յայտնում էր, որ «Սա ամենատարրական քայլն է  
ժողովրդավարութեան իրականացման ճանապարհին: Արդիւնքն էլ հիմն-  
կուանից հեշտութեամբ եւ կտրականապէս կանխատեսելի է... Այն, ինչ այսօր  
կատարւում է Ադրբեջանի Հանրապետութեան ազնիւ ժողովրդի շրջանում,  
յստակ ցոյց է տալիս, որ նրա առաջին քայլը իսլամական Իրանին միանալու  
ցանկութիւնն է...»<sup>33</sup>:

Այսպիսով՝ **պանթիւրքական մտածողութիւն** ունեցող պանազերիա-  
կանները համարում են, որ Արաքս գետի հիւսիսային եւ հարաւային շրջան-  
ները դեռեւս հազարաւոր տարիներ առաջ եղել են թուրքերի հայրենիքի մի  
մասը, որը հետագայում ընկել է Իրանի տիրապետութեան տակ, իսկ Գիւլիս-  
տանի (1813 թ.) եւ Թիւրքմենշայի (1828 թ.) պայմանագրերով բաժանուել է  
Իրանի եւ Ռուսաստանի միջեւ:

Իսկ **իրանական մտածողութիւն ունեցող** պանազերիականները գտնում  
են, որ վերոյիշեալ երկու պայմանագրերով Առանն ու Շիրուանը, որոնք Իրանի  
անբաժան մասն են եղել, Ղաջար հարստութեան արքաների սխալ քաղաքա-  
կանութեան հետեւանքով անջատուել են Իրանից եւ կցուել ցարական Ռու-  
սաստանին եւ 20-րդ դարասկզբին քաղաքական տարբեր պատճառներով  
անուանափոխուել են որպէս առանձին անկախ հանրապետութիւն:

## Եզրակացութիւններ

Վերլուծելով պանթիւրքիզմի եւ պանազերիզմի էութիւնը եւ դրանց տար-  
բերութիւններն ու ընդհանրութիւնները՝ յանգում ենք այն եզրակացութեանը,  
որ պանազերիզմի նպատակը Մեծ Ադրբեջանի ստեղծումն է: Ուստի, ոմանց  
կարծիքով, պանազերիզմը պանթիւրքիզմի իրանական նախագիծն է՝ մէկ  
հանգրուան դէպի մեծ կայսրութեան ստեղծում: Սակայն կարելու է ընդգծել,

32 <https://bit.ly/2vL1eZT> (մուտք՝ 12.04.2016). Տե՛ս նաեւ <https://bit.ly/3dqBHuY> (մուտք՝ 12.04.2016):

33 <https://bit.ly/3ag5KPb> (մուտք՝ 12.04.2016).

որ իրանական մտածողություն ունեցող գործիչների տեսանկյունից պանագերիզմը՝ ընդհակառակը, Ադրբեջանի այսօրուայ հանրապետության տարածքների, այլ խօսքով՝ Առանի ու Շիրուանի վերամիաւորումն է Իրանին:

Ուսումնասիրելով Իրանի ազերիաբնակ շրջանները թիրախ ընտրած պանթիւրքական կազմակերպությունների ծրագրերն ու նպատակները՝ անվարան կարելի է եզրակացնել, որ դրանց շրջանում զուտ պանագերիական նպատակ հետապնդող կազմակերպություն այսօր, ըստ էության, գոյություն չունի: Այդ պատճառով է ներկայումս մասնագետների մեծամասնությունը պանագերիզմը համարում պանթիւրքիզմից սերած գաղափարախօսություն եւ նրա տարածման փուլերից մէկը, որովհետեւ, Իրանի ներկայ պայմանները հաշուի առնելով, մարտավարական նկատառումներով պանթիւրքականները շեշտը դրել են պանագերիզմի վրայ՝ որպէս պանթիւրքիզմի նպատակների իրականացման հանգրուաններից մէկը:

Մինչդեռ իրանական մտածողութեան կրողները, յատկապէս Ատրպատականի ազերի մտաւորականները, ելնելով ճիշտ հակառակ նպատակադրումից եւ բացայայտելով պանագերիզմի իրանական արմատները, այդ գաղափարական շարժումը հակադրում են պանթիւրքիզմի քողարկուած նպատակներին: Այդ պատճառով պանթիւրքիզմի ու պանագերիզմի յարաբերակցութեան խնդիրը, բեկուելով հակադիր քաղաքական նպատակների պրիզմայում, երկակի իմաստ ու նշանակություն է ստանում:

Էլեկտրոնային հասցէ՝ sarkis.mkrtchian@gmail.com

**Սարգիս Մ. Մկրտչեան** - գիտական հետաքրքրություններն ընդգրկում են վերջին մէկ դարի ընթացքում պանթիւրքիզմի՝ Իրան ներթափանցելու փորձերի եւ Իրանի Ատրպատականում պանթիւրքական կազմակերպությունների գործունէութեան պատմությունը: Այս թեմայով հրատարակել է մէկ աշխատություն:

## Summary

### PAN-TURKISM AND PAN-AZERISM

#### Comparative Examination

Sarkis M. Mkrtchian

**Key words** - Pan-Azerism, Azerbaijan, Pan-Turkism, Iran, Great Turan, Turkish, Azeri, language, self-consciousness, identity.

What is Pan-Azerism? What is the difference and what does it have in common with Pan-Turkism? The study proves that these two concepts are closely related.

At present, given that the conditions for raising and implementing pan-Turkic ideas are not favorable, the panturkists have promoted pan-Nazism, for which there is favorable land and with which anti-Iranian forces and countries are interested.

As those Pan-Turkic organizations and figures who pursue the idea of the creation of Whole Azerbaijan outwardly do not use the words Pan-Turkism and Great Turan, even though all of their programs and words refer to the principles of Pan-Turk theorists.

Pan-Azerism, like Pan-Turkism, is an expansionist ideology. But if it is a mean for the panturkists towards creation of Great Turan, for Iranian-minded figures it is a historically-based project on the way to returning lost territories of Iran.

Atrpatakan intellectuals have played (and have) an important role in the preservation, strengthening of the Iranian identity and struggle against pan-Turkic programs, who consider themselves to be Azeris rather than Turks, for the simple reason that the spread of Turkish language in Atrpatakan has only changed the language of that society, but not identity, yet language is not the sole criteria for nationality.

Therefore, the pan-Azerists with pan-Turkic thinking believe that the northern and southern regions of the Arax River were, for thousands of years, a part of the Turks' homeland, which later fell under the rule of Iran, and by the treaties of Gulistan (1813) and Turkmenchay (1828) it was divided between Iran and Russia.

And Iranian-minded pan-Azerists believe that by the two treaties mentioned above, Aran and Shirwan which used to be inseparable parts of Iran, were cut off from Iran and annexed to tsarist Russia due to the misguided policy of the kings of Qajar dynasty and in the early 20th century for various political reasons, already renamed, came to exist as a separate independent republic.

Since the second view has a serious scientific basis, it should serve as a guiding idea also for us in our understanding of the relationship between Pan-Turkism and Pan-Azerism.

Резюме

## ПАНТЮРКИЗМ И ПАНАЗЕРИЗМ

Сравнительное исследование

Саркис М. Мкртчян

**Ключевые слова** – паназеризм, Азербайджан, пантюркизм, Иран, Великий Туран, турецкий язык, азеги, язык, самосознание, идентичность.

Что такое паназеризм? Какое различие и что общего с пантюркизмом? Исследование доказывает, что эти два понятия тесно связаны друг с другом.

В настоящее время с учетом того, что условия для обсуждения и реализации пантюркистских идей неблагоприятны, пантюркистами был выдвинут паназеризм, для которого есть благоприятная почва и в котором заинтересованы антииранские силы и страны.

Потому что пантюркистские организации и деятели, преследующие цель создания Великого Азербайджана, не используют слова «пантюркизм» и «Великий Туран», хотя в их программах и высказываниях отмечаются принципы теоретиков-пантюркистов.

Паназеризм, как и пантюркизм, является экспансионистской идеологией. Но если для пантюркистов это средство на пути к воплощению идеи Великого Турана, то для деятелей с иранским мышлением это имеющий историческую основу проект на пути к возвращению потерянных Ираном территорий.

В сохранении и укреплении иранской идентичности и в борьбе с пантюркистскими программами большую роль играла (и играет) интеллигенция Атропатены, представители которой считают себя азеги, а не тюрками по той простой причине, что распространение тюркского языка в Атропатене изменило лишь язык данного социума, но не идентичность, а язык – это не единственный критерий определения национальности.

Паназеристы с **пантюркистским мышлением** считают, что якобы территории, расположенные к северу и югу от реки Аракс, тысячелетия назад были частью родины турок, впоследствии попавшую под владычество Ирана,

а Гюлистанским (1813 г.) и Туркманчайским (1828 г.) договорами разделенную между Ираном и Россией.

А паназеристы с **иранским мышлением** считают, что двумя вышеупомянутыми договорами Аран и Ширван, бывшие неотделимыми частями Ирана, вследствие неправильной политики шахов из династии Каджар были оторваны от Ирана и присоединены к царской России. А в начале 20-го века по различным политическим причинам они начали существовать в переименованном виде - как отдельная независимая республика.

Так как вторая точка зрения имеет серьезную научную основу, она должна для нас стать ведущей в вопросе понимания отношений пантюркизма и паназеризма.

## REFERENCES

1. **Ahmad Kasravi**, Azeri Ya Zaban e Bastan e Azerbaijan, Sal 1390 (Chap e Avval 1304 Shamsi), Nashr e Hezar Kerman, Tehran, 55 Safhe, Safheye 8 (**In Persian**).
2. **Ahmad Kazemi**, Pan-Turkism Va Pan-Azerism, Entesharat e Moaseseye Farhangi e Motaleat Va Tahghighat e Beynolmelali e Abrar e Moaser e Tehran, Sal e 1385. Chap e Nokhost, Safheye 273 (**In Persian**).
3. **Ali Morshedizad**, Roshanfekran e Azeri Va Hovviyat e Melli Va Ghomi, Nashr e Markaz, Tehran, Sal e (**In Persian**).
4. **Gholamreza Ensafpour**, Tarikh e Tabar Va Zaban e Mardom e Azerbaijan, Entesharat e Fekr e Rouz, Tehran, Chap e Avval, 1377, 201 Safhe (**In Persian**).
5. **Kaveh Bayat**, Pan-Turkism Va Iran, Chap e Avval, Bahar e 1387, Nashr e Pardis e Danesh Ba Hamkariye Sherkat e Nashr Va Padjoohesh e Shirazeye Ketab, Tehran, 247 Safhe (**In Persian**).
6. **Rahim Nikbakht**, Naghsh e Azerbaijan Dar Tahkim e Hovviyat e Iran, Sal 1387, Chap e Avval, Tehran, Vezerat e Oloum, Tahghighat Va Fanavari, Moavenat e Farhangi, Daftar e Barnamerizi e Ejtemaii Va Motaleat e Farhangi Va Daneshgah e Payam e Nour, Markaz e Naghadeh, 576 Safhe (**In Persian**).
7. **Rahim Reyisniya**, Daneshnameye Jahan e Islam, Chap e Dovvom, Madkhal e Loghatname Va Daneshnameye Bozorg, Jeld e Panjom, Safheye 466-472 (**In Persian**).
8. **Touraj Atabaki**, Azerbaijan Dar Iran e Moaser, Tarjomeye Mohammad Karim e Eshragh, Entesharat e Tous, Chap e Avval, Tehran, 1376, 287 Safhe (**In Persian**).
9. **Walter Bruno Henning, David Neil MacKenzie, Helmut Humbach, Gherardo Gnoli**, Dah Goftar Darbareye Zaban e Kharazmi, Entesharat e Tahoori, Tehran, Sal e 1387, 242 Safhe (**In Persian**).
10. [http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209\\_123\\_iran\\_azarbayjan\\_change\\_name.shtml](http://www.bbc.co.uk/persian/iran/2012/02/120209_123_iran_azarbayjan_change_name.shtml).
11. <http://www.encyclopaediaislamica.com/madkhal2.php?sid=2644>.
12. <https://bit.ly/2QGBwwY>.
13. <https://bit.ly/2vJyAs4>.
14. <https://bit.ly/2vL1eZT>.
15. <https://bit.ly/3ag5KPb>.
16. [https://www.amar.org.ir/Portals/0/1\\_result951221.pdf](https://www.amar.org.ir/Portals/0/1_result951221.pdf).